

Բայց... սալին վրա արյուն, տ՛իզ բեռ-
ցեր են...
Հա՛րս, ճրագդ աստին երկարե.

Հերոս տղաս հուն զարնվա՛ծ է սրտեն,—
Ա՛խ, հարս, ճրագը մարե...



Քաղաքային նոր օդանավակայանի շենքի նախագիծը. Երևան

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

Ն Ա Մ Ա Կ Ը

Նամակը եկավ ժամը երեքին,
Նա ժամը մեկին... մեռա՛ծ էր արդեն.
Ինչքա՛ն էր կարոտ նա այդ նամակին,
Իսկ հիմա... ա՛չքն էլ իսկի չթարթեց...

Երբ մարտն ավարտվեց, ու եղավ դադար,
Մի հա՛վք էր ճախրում դիրքերի վրա.—
Մոր նամա՛կն էր այն, որ սրտապատում,
Դիակների մեջ փնտրո՛ւմ էր նրան...

1942

ՆԱԻԻԻ ԶԱՐՅԱՆ

Զ Ա Յ Ն Հ Ա Յ Ր Ե Ն Ա Կ Ա Ն

Այն ձեզ էր հորդորում քերթողահայրը մեծ՝
Խորենացին,
Որ մի ձեռքով բռնեց կերոնն Արևելքի
Եվ մի ձեռքով՝ կերոնն Արևմուտքի,
Եվ լույս արավ դեպի դարերը հին:
Տեսավ նա այն ուղին,
Որով անցել էր բարավանը մեր ամպրո-
պածե՛ծ:
Առասպելի ոսկյա կեղևը նա բացեց,
Գտավ մեր պատմության կորիզը կենսա-
թով
Եվ այն, ինչ հիզակով էր նվաճել Տիգրա-
նը մեծ,
Նա նվաճեց կրկին մագաղաթով:
Այստեղ կանգնե՛ք մի պահ,
Խոնարհվեցե՛ք,
Ինչպես խոտերն են խոնարհվում արշա-
լույսից առաջ:

Արյան մատախտույց
Ելնում է Վարդանի պատկերը սեզ
Եվ աջը մեզ մեկնած՝ կրկին գոչում է.
—Հա՛յ քաջեր, հառա՛ջ...
Այն ժամանակ:
Պարսիկն ուզում էր կլանել մեր սիրտն ու
մեր լեզուն:
Եվ հաչ գնդերն քարծրացան ի մարտ.
Ելան ամենքը—պարմաններն արևազուն,
Ելան տիկնալք մեր փափկասուն,
Ելան իշխան, ուսմիկ ու քահանա:
Եվ ահա գնդերն առաջնորդում էր
նա,
Կաղնեքազուկ սպարապետը մեր,
Վարդան Մամիկոնյանը:
Այն ահեղ Ավարայրում
Իրար դիպան երկու զորություններ,
Պարսիկը ուսվածական իր փղերով,

Հայոց քաջերը հայրենյաց սիրով,
Ընկան փղերը բիրտ,
Ընկան քաջերը բոցարյուն,
Ընկալ և քաջ Վարդանը շատաչով թշնա-
մասաստ:

Բայց գոռ պարսիկն ահա միգակաթեկ՝
Քաշվեց իր հողը բարբարոս
Եվ իր սրտում ասաց.

—Հայե՛ր, թո՛ղ Ահրիմանը ձեզ տանի,
Կուլում եք... ապրեցե՛ք:

Այո, կուլել ենք մենք,
Զարկել մեր զորավոր ոսոխներից,
Զի մենք սիրում ենք հայրենիքը մեր

ավանդական:

Սիրում ենք մեր Մասիսն, անկրկնելին,
Մեր Արագածը, Ղարաբաղը, մեր Լոռին,
Մեր լեռկ լեռները, որ եղել են օրորոց և
գերեզման,

Մեր հայրերի համար, ինչպես և մեզ:
Սիրում ենք հողը մեր արևակեզ,
Որ մեզ տվել է հաց, գինի և խնդություն !
Եվ ծաղիկներ և երգ երանավետ,
Սիրում ենք մեր քաղցրադողանց լեզուն,
Որով խոսել ենք մոր, կնոջ ու որդու հետ
Ու ողջունել բարեկամին:

1943



Ա. Մուսկյանի անվան դրամատիկական թատրոնի մոր շենքը, Լեռնական